ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ, 2020, № 1

Արարատ Հակոբյան

1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

Հիմնաբառեր. *թուրք-հայկական պատերազմ, Հայաստան, Ս. Վրացյան, տարակարծություն, պատմագրություն, Կարս, Է. Զոհրաբյան, փաստ, սեպտեմբերի 28, վորք, ռազմաճակատ, կոչ, որոշում, «Յառաջ», կառավարություն:*

Հայոց բազմադարյան պատմության մեջ հանդիպում են դեպքեր, իրադարձություններ, փաստեր, որոնց վերաբերյալ տարբեր պատճառներով մինչ օրս ստույգ ու հստակ թվագրումներ չկան, իսկ Պատմահայր Խորենացուց գիտենք, որ «պատմությունն առանց ժամանակագրության ստույգ չէ»[1]: Եթե պատմական անցյալի հնագույն, հին և միջին դարերի վերաբերյալ ծագող նման խնդիրն աղբյուրագիտական, գրավոր, վավերագիր, հուշագիր և այլ տվյալների սղության պատճառով հասկանալի ու բացատրելի է, ապա նոր ու հատկապես նորագույն ժամանակաշրջանի պատմության դեպքերի ու իրադարձությունների վերաբերյալ հանդիպող ժամանակագրական բնույթի անստույգ, կասկած հարուցող թվագրումները կարող են զարմացնել: Հասկանալի է, որ խոսքը չի վերաբերում այս կամ այն պատմական երևույթի կամ իրադարձության լուսաբանման, մեկնաբանության, վերլուծության կամ քաղաքական գնահատականների հարցերում հետազոտող հեղինակի հանդես բերած սուբյեկտիվ մոտեցումներին ու տեսակետներին (տարակարծություններին), այլ իրադարձության կամ փաստի ստույգ արձանագրմանը:

Պատմական այդպիսի իրադարձություն է 1920 թ. թուրք-հայկական պատերազմը, որի սկսման **օրը վերջնականորեն հստակեցված չէ, չնայած** այդ ժամանակների հարուստ տեղեկատվության, պաշտոնական գրագրության, արխիվային փաստաթղթերի, մամուլի, հուշագրությունների առկայության պայմաններում **դրա ճշգրտումը սպասելի ու հնարավոր էր**:

Նախ արձանագրենք, որ սկսած 1920-ական թվականներից՝ հայ (խորհրդային, հետխորհրդային ու սփյուռքահայ), ինչպես նաև խորհրդային ու թուրք պատմագիտական և հուշագրական գրականության մեջ չկա միասնական տեսակետ թուրք-հայկական պատերազմի սկսման օրվա վերաբերյալ: Ավելին, հաճախ այդ նույն պատմագիտական և հուշագրական գրականության մեջ զարգացվում էր այն միտքը, թե իբր 1920 թ. թուրք-հայկական պատերազմում ՀՀ դաշնակցական կառավարությունը մղում էր իմպերիալիստական պատերազմ, մինչդեռ քեմալական Թուրքիան՝ ազգային-ազատագրական[2]:

Որպեսզի թուրք-հայկական պատերազմի սկսման օրվա վերաբերյալ հարցը պարզենք, նկատենք, որ այս խնդրին առնչված հետազոտողներին կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջին խմբին պայմանականորեն կարելի է դասել ավելի հաճախ հանդիպող **սեպտեմբերի 23-ի** կողմնակիցների, իսկ երկրորդին՝ **սեպտեմբերի 28-ի** կողմնակիցների շարքին: Սակայն, երբ խոսվում է պատերազմի սկիզբը սեպտեմբերի 23-ին կամ 28-ին դնելու մասին, այստեղ էլ չկա հստակություն, որովհետև կան հեղինակներ, ովքեր պատերազմի սկիզբ են համարում սեպտեմբերի 23-ին նախորդող օրերը (սեպտեմբերի 21-22-ը), ինչպես նաև սեպտեմբերի 24-ը: Նույնիսկ Շիրակի նահանգապետ Կ. Սասունին պատերազմի սկզբնավորումը համարում է 1920 թ. հունիս ամիսը[3]: Խորհրդահայ պատմաբան Մ. Արզումանյանը ևս թուրք-հայկական պատերազմի սկիզբը համարում է 1920 թ. ամառը[4]: Ուսումնասիրողները, նման միտք հայտնելով, նկատի ունեին հանրապետության ներքին ճակատում Թուրքիայի կողմից բորբոքվող թուրք-թաթարական ապստամբական գործողությունները ու հատկապես թուրք-հայկական սահմանային

** Հոդվածը ներկայացվել է 26.02.2020 թ., գրախոսվել՝ 08.06.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] Տե՛ս Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ. Ստ. Մալխասյանի, Ե., 1961, էջ 242:

[2] Հարությունյան Շ., Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում 1920-1963, Ե., 1967, էջ 381:

[3] Տե՛ս Սասունի Կ., Հայ-թրքական պատերազմը (1920-ին), Պէյրութ, 1969, էջ 21:

[4] Տե՛ս Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Ե., 1973, էջ 326:

ընդհարումները: Բայց և այնպես այս հեղինակների կողմից նշվող՝ պատերազմի սկզբնավորման ամենաընդունված օր կարելի է համարել սեպտեմբերի 23-ը: Ինչ վերաբերում է սեպտեմբերի 28-ը պատերազմի սկիզբ համարող տեսակետի կողմնակիցներին, ապա նրանք էլ, սեպտեմբերի 28-ից զատ, երբեմն նշում են սեպտեմբերի 26-ը, 27-ը կամ 29-ը, բայց ամենատարածվածն ու ընդունվածը համարվում է սեպտեմբերի 28-ը: Հասկանալի է, որ նման տարակարծությունների ամենահիմնական պատճառն այն է, որ քեմալական Թուրքիան պատերազմ սանձազերծեց ՀՀ-ի դեմ առանց որևէ պաշտոնական կամ անպաշտոն հայտարարության:

Այժմ, խմբավորելով, համադրելով, քննելով ու վերլուծելով առկա խնդրին առնչվող փաստերն ու տարատեսակ տեղեկությունները, փորձենք գալ վերջնական եզրահանգման, թե, ի վերջո, իրականում ո՞րն է պատերազմի սկսման ստույգ օրը:

Սեպտեմբերի 23-ը թուրք-հայկական պատերազմի սկիզբը համարող տեսակետի կարելի է հանդիպել ժամանակի հուշագիր-պատմագիր հեղինակների, խորհրդային, սփյուռքահայ, հետխորհրդային ու անգամ մեր օրերի՝ խնդրի հետ առնչվող հեղինակների աշխատություններում: Պատերազմի սկիզբը սեպտեմբերի 23-ը համարող ամենաճանաչված, ժամանակաշրջանի դեպքերին ականատես ու ակտիվ մասնակից հեղինակը համարվում է Հայաստանի Հանրապետության վերջին վարչապետ Ս. Վրացյանը՝ Առաջին հանրապետության ամբողջական պատմությանը նվիրված իր կապիտալ աշխատությամբ: «Սեպտեմբերի 23-ին,– գրում է Ս. Վրացյանը,– առանց պատերազմի հայտարարության, թուրքական բանակը դիմեց ընդհանուր հարձակման Հայաստանի դեմ: Սկսվում էր հայ-թուրքական պատերազմը»[1]: Հարկ է նշել, որ Հայաստանի առաջին հանրապետության պատմության հարցերում Ս. Վրացյանը հայ պատմահուշագրական գրականության մեջ համարվել է անառարկելի հեղինակություն և նրա հայտնած տեղեկությունները տասնամյակներ շարունակ վստահություն են ներշնչել ու մեծապես ազդել են հետագա շատ հեղինակների, այդ թվում նաև մեր՝ տողերիս հեղինակի տեսակետի ձևավորմանը:

Ս. Վրացյանի նույն տեսակետն է պաշտպանում 1920 թ. մայիսին Մոսկվա մեկնած Լ. Շանթի գլխավորած պատվիրակության անդամ, ՀՀ վերջին կառավարության ֆինանսների նախարար Հ. Տերտերյանը: Նա իր հուշերում նշում է, որ «ռուս-հայկական բանակցութիւնները վիժեցնելու եւ Սեւրի դաշնագիրը արժէքազրկելու նպատակով թուրքերը սեպտեմբերի 23-ին, առանց պատերազմ յայտարարելու, հարձակում գործեցին մեր զորամասերի վրա ու մտան մեր երկրի սահմանները: Սկսվեց հայ-թրքական պատերազմը»[2]: ՀՀ պետական մեկ այլ բարձրաստիճան պաշտոնյա, արտգործնախարարության ավագ քարտուղար Հ. Տեր-Հակոբյանը հայտնում է, թե թուրքերի ընդհանուր հարձակումը սկսվել է սեպտեմբերի 21-ին[3]:

Պատերազմական դեպքերին ու իրադարձություններին անմիջական ականատես ու մասնակից, Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանն իր ծավալուն հուշերում կոնկրետ չի գրում պատերազմի սկսվելու ժամանակի մասին, սակայն նշում է, որ «Սեպտեմբերի 28-ին սկսուեց մեր հռչակաւոր նահանջը»: Նահանգապետի պատկերմամբ՝ «վերջին երկու ամսուան ընթացքում» Կարսի նահանգը գտնվել է շարունակական պատերազմական վիճակում[4]: Տվյալ դեպքում նա չի զատորոշել ամառվա ընթացքում տեղի ունեցած հայ-թուրքական սահմանային բախումները բուն պատերազմից:

«Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական հրատարակության 7-րդ հատորում (հեղինակներ՝ Գ. Գալոյան, Հ. Էլչիբեկյան) պատերազմի սկիզբը ընդհանրական, անորոշ նշված է **սեպտեմբեր** ամիսը, սակայն դրանից անմիջապես հետո արձանագրված է, որ թուրքերը, անցնելով հարձակման՝ սեպտեմբերի 29-ին գրավեցին Սարիղամիշն ու Կաղզվանը[5]: Ավելի ուշ Գ. Գալոյանը

---

[1] *Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, 1958, էջ 466, նույնի՝ Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 493:*

[2] *Տէրտէրեան Հ., Հայաստանի Հանրապետութեան եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցութիւնները. Լեւոն Շանթի պատվիրակութիւնը, «Հայրենիք», 1954, թիվ 5, մայիս, էջ 6:*

[3] *Տե՛ս Տէր-Հակոբեան Հ., Հայաստանի վերջին աղէտը, Կ. Պոլիս, 1921, էջ 26:*

[4] *Տե՛ս «Կարսի մարզը Հայաստանի Հանրապետութեան կազմում (1919 թ. ապրիլ-1920 թ. հոկտեմբեր)», Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանեանի յուշերը (այսուհետ՝ Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանեանի յուշերը) կազմեց Վ. Հարութունեան, Ե., 2018, էջ 614:*

[5] *Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 7, Ե., 1967, էջ 103:*

թուրքական զորքերի հարձակման սկիզբը համարում է սեպտեմբերի 22-ը[1]: Այդ օրը թուրք հայկական պատերազմի սկսման տեսակետն են պաշտպանել նաև Խորհրդային ժամանակաշրջանում հրատարակված «Հայ ժողովրդի պատմություն (1801-1978 թթ.)» բուհական դասագրքի[2], «Հայկական սովետական հանրագիտարան»-ի[3] և «Հայկական հարց» հանրագիտարանի հեղինակները[4]: Սեպտեմբերին 23-ին պատերազմի սկսման վերաբերյալ կարծիք են հայտնել Ջ. Կիրակոսյանը[5], Ս. Կարապետյանը (ի դեպ, վերջինս գրում է, որ ոչ թե Թուրքիան հարձակվեց «Հայաստանի Հանրապետության վրա», այլ խորհրդային մտածելակերպին բնորոշ՝ «Արևելյան Հայաստանի վրա»)[6] և սփյուռքահայ հեղինակներ Արսեն Կիտուրը, Ավետիս Եափուճյանը և Հրանդ Գանգրունին[7]: Թուրք պատմաբաններից Էնվեր Կարալը, Ահմեդ Շյուքրյու Էսմերը և ուրիշներ պատերազմի սկիզբը համարում են սեպտեմբերի 24-ը[8]:

Խորհրդային ու հետխորհրդային ժամանակաշրջանում թուրք-հայկական պատերազմի հարցերով ամենաշատ զբաղված պատմաբաններից է Է. Զոհրաբյանը: Նա իր վերջին աշխատություններից մեկում, նկատի առնելով, որ սկզբնաղբյուրները տարբեր տեղեկություններ են հաղորդում թուրք հայկական պատերազմի սկզբանվորման օրվա կապակցությամբ (սեպտեմբերի 21, 22, 23, 24 և նույնիսկ 28), փորձել է պատասխանել այն հարցին, թե իրականում երբ է սկսվել պատերազմը[9]: Պատմաբանը, մատնանշելով մի շարք հայ և օտար աղբյուրների տվյալներ, համադրելով ու գնահատելով դրանք, վերջում հանգել է այն եզրահանգմանը, որ **թուրքական ընդհանուր արշավանքի սկիզբը պետք է համարել սեպտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը**[10]: Է. Զոհրաբյանն իր վերջին մենագրությունում նույնպես նշում է, որ սեպտեմբերի 23-ից լույս 24-ի գիշերը Կարաբեքիրի գլխավորած զորամասերը անցել են ընդհանուր հարձակման[11]: Դրանով հեղինակը փորձել է ուղղել ավելի վաղ հրատարակած գրքում թույլ տված անճշտությունը, երբ թուրքական ընդհանուր հարձակման սկիզբը համարել է սեպտեմբերի 21-ը[12]: «Հայոց պատմություն» ակադեմիական նոր հրատարակության համապատասխան բաժնում, որի հեղինակը Է. Զոհրաբյանն է, դարձյալ արձանագրված է, որ «պատերազմը սկսվեց սեպտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը»[13]: Միակողմանի չլինելու համար նշենք, որ մեր աշխատություններում ևս թուրք-հայկական պատերազմի սկիզբը նշված է սեպտեմբերի 23-ը[14]:

Այս ամենը վկայում է այն մասին, որ խորհրդային շրջանում ու հատկապես հետանկախության վերջին շուրջ երեք տասնամյակների ընթացքում հայ պատմագրության մեջ հիմնականում իշխող է եղել այն տեսակետը, որ թուրք-հայկական պատերազմի սկիզբը **սեպտեմբերի 23-ն** է:

Պատմաբան և հուշագիր հեղինակների մի պատկառելի խումբ էլ թուրք-հայկական պատերազմի սկիզբը համարել է սեպտեմբերի 28-ը, և այս տեսակետի կողմնակիցներ գնալով ավելի ու ավելի գերիշխող են դառնում:

---

[1] Տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., 1999, էջ 294:

[2] Տե՛ս Պարսամյան Վ., Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմություն (1801-1978 թթ.), Ե., 1979, էջ 470:

[3] Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 6, Ե., 1980, էջ 162:

[4] Տե՛ս «Հայկական հարց» հանրագիտարան, պատ. խմբ. Կ. Խուդավերդյան, Ե., 1996, էջ 144:

[5] Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», կազմողներ՝ Ջ. Կիրակոսյան, Ռ. Սահակյան, Ե., 1972, էջ 58:

[6] Կարապետյան Ս., 1920 թվականի հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Ե., 1965, էջ 3:

[7] Տե՛ս «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962)», խմբ. Ա. Կիտուր, հ. Ա, Պէյրութ, 1962, էջ 491; Եափուճեան Ա., Եւ վերածնաւ հայ ժողովուրդը հուրեն ու սուրեն, Գահիրե, 1971, էջ 74; Գանգրունի Հ., Հայաստան 1920-21 եւ միջազգային դիւանագիտութիւնը, Պէյրութ, 1986, էջ 141:

[8] Տե՛ս Սարգսյան Ե., Սահակյան Ռ.,Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Ե., 1963, էջ 69-70:

[9] Տե՛ս Զոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Ե., 1997, էջ 160:

[10] Տե՛ս նույն տեղում, էջ 165:

[11] Տե՛ս Զոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը (1920 թ. մայիս – 1921 թ. հոկտեմբեր), Ե., 2010, էջ 157:

[12] Տե՛ս Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Ե., 1979, էջ 55:

[13] «Հայոց պատմություն», հ. 4, գիրք 1-ին, Ե., 2010, էջ 254:

[14] Տե՛ս Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920 թթ., Ե, 2005, էջ 309; նույնի՝ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., Ե., 2018, էջ 133:

Տակավին 1950-ական թթ. Խորհրդային Հայաստանին նվիրված փաստաթղթերի ժողովածուում թուրք-հայկական պատերազմի սկիզբը նշված էր սեպտեմբերի 28-ը[1]: Նույնն արձանագրված է խորհրդային պատմաբան Ս. Վարդանյանի մենագրությունում[2]:

Ի տարբերություն Ս. Վրացյանի՝ Առաջին հանրապետության ամբողջական պատմությանը նվիրված երկրորդ կապիտալ աշխատության հեղինակ, երկրորդ վարչապետ Ա. Խատիսյանը նշում է, որ «Սեպտեմբեր 22-ին թուրքերը մոտեցան Օլթիին: Միաժամանակ Սեպտեմբեր 22-ին Ատրպէջանի խորհրդային ուժերը մոտեցան Աքսիբարային[3]: Սեպտեմբեր 29-ին սկսաւ միաժամանակ յարձակում Կարսի եւ Սուրմալուի ուղղությամբ»[4]: Նախկին վարչապետի խոսքերից կարելի է հասկանալ, որ թուրք-հայկական պատերազմը սկսվել է սեպտեմբերի 29-ին: Բայց պետք է նշել, որ Ա. Խատիսյանը 1920 թ. հունիսից արտասահման գործուղման հետևանքով հեռու է գտնվել զարգացող իրադարձություններից. նա Հայաստան էր վերադարձել միայն հոկտեմբերի 23-ին[5]:

Հետխորհրդային շրջանում լույս տեսած «Հայոց պատմություն» 7-8-րդ դասարանների համար նախատեսված դասագրքում տվյալ գլխի հեղինակ Վ. Ղազախեցյանը թուրք-հայկական պատերազմի սկիզբը համարել է սեպտեմբերի 28-ը[6]: Սեպտեմբերի 28-ին Հայաստանի վրա թուրքական զորքերի ընդհանուր հարձակման մասին է արձանագրված խորհրդային հեղինակներ Դ. Զավրիևի և Ա. Կադիշևի մենագրություններում[7], նաև ԵՊՀ «Հայոց պատմություն» բուհական ձեռնարկում[8] և ակադեմիկոս Լ. Խուրշուդյանի վերջին մենագրությունում[9]:

Սփյուռքի ճանաչված պատմաբան, մեր ժամանակներում Հայաստանի առաջին հանրապետության ամենախորագիտակ պատմաբաններից Ռ. Հովհաննիսյանը, մի շարք փաստարկներ բերելով, նշում է, որ սեպտեմբերի 28-ի լուսադեմին՝ ժամը 3-ին, Ք. Կարաբեքիր փաշայի գլխավորած 15-րդ կորպուսի զորաբաժինները անցան հարձակման[10]:

Թուրքագետ Ռ. Սաֆրաստյանը, հայ և օտար մի շարք աղբյուրների փաստական հիմնավորումներով, նաև գրքի վերջում մի շարք նորահայտ փաստաթղթեր զետեղելով, հետևություն է անում, որ թուրքական 15-րդ բանակային կորպուսի և Արևելյան ռազմաճակատի հրամանատար Ք. Կարաբեքիր փաշան նախապես՝ սեպտեմբերի 20-ին, ի կատարումն Անգորայից կառավարության նախագահ Մ. Քեմալից ստացված հրամանի, տեխնիկական ու նախապատրաստական մի շարք աշխատանքների ավարտից հետո, Հայաստանի սահմանին կենտրոնացնելով 50-հազարանոց բանակ՝ **սեպտեմբերի 28-ին** սկսեց հարձակումը[11]: Հայաստանի վրա հարձակման՝ Մ. Քեմալի սեպտեմբերի 20-ի հրամանի մասին է հիշատակում նաև Գ. Մախմուրյանը[12]:

Հավելենք, որ Մ. Քեմալի՝ Հայաստանի վրա սեպտեմբերի 20-ի հարձակման հրամանի վերաբերյալ փաստի մասին անուղղակի վկայում է Արդահանի գավառապետ, գնդապետ Իբրահիմ Կադիմովը: Ի դեպ, այս անձի շուրջ հայ պատմագրության մեջ տարակարծություն կա՝ արդյոք նա եղել է Հայաստանի Հանրապետությանը հավատարիմ ծառայո՞ղ, թե՞ թուրքական լրտես: Սեպտեմբերի 20-ին նա ծածկագրով հեռագրել է Կարսի նահանգապետ Ս. Ղորղանյանին, որ Կա-

---

[1] *Տե՛ս «Великая Октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении (сборник документов)», под ред. А. Мнацаканяна и др., Е., 1957, с. 628.*

[2] *Տե՛ս Вартанян С., Победа советской власти в Армении, Е., 1959, с. 298.*

[3] *Գետ Իջևանի ուղղությամբ և համանուն գյուղ՝ Աքսիբար (ներկայիս Ոսկեպար) Աղստև գետի ձախ ափին:*

[4] *Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 261:*

[5] *Նույն տեղում, էջ 248:*

[6] *Տե՛ս «Հայոց պատմություն», դասագիրք միջ. դպրոցի 7-8-րդ դասարանների համար, խմբ. Վ. Բարխուդարյան, Ե., 1994, էջ 268:*

[7] *Завриев Г., К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1947, с. 84; Кадишев А., Интервенция и гражданская война в Закавказье, М., 1960, с. 322 и др.*

[8] *Տե՛ս «Հայոց պատմություն», խմբ. Սիմոնյան Հր. Ռ., Ե., 2012, էջ 606:*

[9] *Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թ., Ե., 2002, էջ 172:*

[10] *Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Ե., 2016, էջ 225:*

[11] *Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Մուստաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921), Ե., 2019, էջ 75-76:*

[12] *Տե՛ս Махмурян Г., Армения в политике США (1917-1923), Е., 2018, с. 447.*

ռաբեքիրի զորավարներից Խալիլ փաշան մեծ ուժերով պատրաստվում է միաժամանակ հարձակվելու և՛ Սարիղամիշի, և՛ Մերդենեկի վրա[1]: Այս փաստը, համենայն դեպս, վկայում է նրա՝ Հանրապետությանը ծառայելու մասին: Գավառապետ Ի. Կադիմովի՝ թուրքական լրտես չլինելու մասին է վկայում նաև այն, որ, երբ թուրքերը սեպտեմբերի 30-ին գրավեցին Արդահանը, այնտեղ գտնվող հայկական վաշտը, տեղի հայ բնակչությունը, նրանց հետ նաև նա՝ անցնում են Վրաստան[2]:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի վրա հարձակման վերջնական հրամանը սեպտեմբերի 20-ին տվել է Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի (ԹԱՄԺ) կառավարության նախագահ Մուստաֆա Քեմալը: Իսկ պատերազմը, ինչպես վերը նշվեց, կազմակերպական ու տեխնիկական մի շարք հանգամանքների պատճառով սկսվել է **սեպտեմբերի 28-ին**[3]:

Բնականաբար, հարց է ծագում՝ այդ ինչպես է հնարավոր դարձել, որ շատ պատմագիր ու հուշագիր հեղինակներ սեպտեմբերի 23-ը կամ դրան նախորդող ու հաջորդող մեկ-երկու օրերը ներկայացրել են որպես թուրք-հայկական պատերազմի սկիզբ: Դրա պատասխանի հիմնական փաստարկն այն է, որ սկսած 1920 թ. հունիսի կեսերից, ավելի ստույգ՝ **հունիսի 18-ից**, հայկական զորքերի կողմից Օլթի-Փենյակի ածխահանքերի գրավումից հետո, ավելի քան երեք ամիս մշտական լարված իրավիճակ ու սահմանային լուրջ ընդհարումներ են տեղի ունեցել հայ-թուրքական սահմանագծի ամբողջ երկարությամբ, և առանձին հեղինակներ տեղի ունեցած այս կամ այն սահմանային բախումը դիտել են որպես պատերազմի սկիզբ:

Այդպիսի մի սահմանային լուրջ ընդհարման դրվագ է համարվում Սարիղամիշի և Օլթի-Մերդենեկի հատվածներում սեպտեմբերի 23-24-ին տեղի ունեցած սահմանային ուժեղ բախումը, որի արդյունքում, ի դեպ, հայկական զինուժին հաջողվել է թշնամուն հետ շպրտել և վերականգնել թշնամու կողմից գրավված հայկական սահմանային նախկին նպաստավոր դիրքերը: Սակայն սեպտեմբերի 26-27-ի գիշերը թուրքերը կրկին հարձակում գործեցին և ստիպեցին հայկական զինուժին նահանջել իր զբաղեցրած նախկին դիրքերը[4]:

Եվ այս հանգամանքն էլ որոշ հեղինակներ հիմք են համարել պատերազմը սկսվելու վերաբերյալ: Հասկանալի է, որ այդ ամենի պատճառն այն է, որ չի եղել որևէ հայտարարություն պատերազմ սկսելու մասին:

Արդ, մեր ձեռքի տակ առկա բազմահարուստ արխիվային, պաշտոնական վավերագիր, հուշագիր, մամուլի և փաստագրական այլ տվյալների ու նյութերի հիման վրա փորձենք հիմնավորել թուրք-հայկական պատերազմի սկսման ստույգ օրը և դրանով մեկընդմիշտ վերջ տալ մեր պատմագիտական գրականության մեջ մինչ օրս դեգերող տարակարծություններին: Նախապես ընթերցողին կողմնորոշենք, որ մեր կողմից շրջանառվող նյութերը գալիս են միանշանակ հավաստելու (վկայելու) ու հաստատելու այն իրողությունը, որ պատերազմն իրոք սկսվել է **սեպտեմների 28-ին**:

Նախ, ժամանակագրական հերթականությամբ սկսենք պաշտոնական նյութերից: Սեպտեմբերի 30-ին առաջին անգամ նախարարապետ Հ. Օհանջանյանի գլխավորած Բյուրո-կառավարության հրապարակած հաղորդագրության մեջ կարդում ենք. «**Սեպտեմբերի 28-ի գիշերը տաճիկները ուժեղ հարձակման դիմեցին Փենեակի և Բարդուսի ճակատում** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.): Մեր զորամասերը սաստիկ դիմադրութիւն ցոյց տալով՝ ամրացան Վերիշէնի բարձունքների վրա: Նոյն սեպտեմբերի 28-ին տաճկական խոշոր ուժեր գրոհ տուին դէպի Կարաուրգան, որտեղից մեր զօրքերը քաշուեցին Սողանլուխ լեռնաշղթան»[5]: Հաղորդագրության մեջ նաև նշվում

---

[1] *Տե՛ս «Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում (նյութեր և փաստաթղթեր)», կազմեցին՝ Կ. Ղազարյան և Մ. Ներսիսյան, Ե., 1932, էջ 142, նաև՝ Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանեանի յուշերը, էջ 607:*

[2] *Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 280, ց. 2, գ. 35, թ. 5:*

[3] *Տե՛ս Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 75-76:*

[4] *Տե՛ս Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմը, հայ սպայութիւնը, Շատախ, Ե., 2002, էջ 90-91; Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 50; Кадишев А., նշվ. աշխ., էջ 321:*

[5] *ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 244, թ. 2, նաև՝ «Յառաջ», Երեւան, 1 հոկտեմբերի 1920 թ.: Կառավարության այս հաղորդագրության կապակցությամբ հարկ ենք համարում կատարել մի անդրադարձ: Բանն այն է, որ Ս. Վրացյանն իր մենագրության մեջ ամբողջովին վետեղել է կառավարության այս հաղորդագրությունը, որը, սակայն, ներկայացրել է իբրև նախարարապետ Հ. Օհանջանյանի՝ Հայաստանի քաղաքացիներին ուղղված կոչ: Գրքում բերված տեքստում*

է, որ հայկական զորախմբերը դիմադրություն են ցույց տվել, սակայն հակառակորդի գերակշիռ ուժերի ճնշման տակ, շրջափակման մեջ չընկնելու և ավելի հարմար դիրքեր գրավելու համար սեպտեմբերի 29-30-ին պարպել են Սարիղամիշն ու Կաղզվանը. «Անակնկալներից ու զոհերից խուսափելու և ավելի հարմար դիրքեր գրավելու նպատակով ստեղծված վիճակում սեպտեմբերի 29-ի գիշերը մեր հրամանատարությունը դատարկել է Սարիղամիշն ու Կաղզվանը»[1]: Թուրքերը գրավել են նաև Մերդենեկն ու Արդահանը[2]:

Արդեն հոկտեմբերի 1-ին նախարարապետ Հ. Օհանջանյանի ստորագրությամբ հրապարակվում է կոչ՝ ուղղված Հայաստանի քաղաքացիներին: Դրանում ասված է. «Անթիվ զոհերի արյունով ձեռք բերած մեր հայրենիքը և ազատությունը վտանգի մեջ է: Տաճիկ փաշաներն ու բեկերը ձեռնարկել են հայ ժողովրդի բնաջնջման գործին: Թշնամին խախտելով մեր երկրի սահմանները արշավանք է սկսել դեպի մեր հայրենիքի սիրտը: Թշնամին տիրել է Սարիղամիշին և այլ դիրքերի և ուզում է հարձակվել Կարսի վրա:

Քաղաքացինե՛ր, ձեզ հրավիրում եմ սրբազան կռվի: Ի զե՛ն քաղաքացիներ, դեպի ռազմաճակատ՝ դեպի հաղթանակ»[3]:

Պատերազմը սկսվելու կապակցությամբ ՀՅԴ Բյուրոն, որը նույն ինքը՝ Հայաստանի կառավարությունն էր, սեպտեմբերի 29-ին ընդունված և «Յառաջ» պաշտոնաթերթի սեպտեմբերի 30-ի և հետագա մեկ-երկու համարներում Թուրքիայի հարձակման կապակցությամբ կուսակցական ընկերներին ու քաղաքացիներին ուղղված հայտարարություններում ու կոչում ահազանգվում էր թուրքական մեծաթիվ զորքերի՝ Հայաստանի վրա հարձակման և միասնական ուժերով անարգ թշնամուն հակահարված տալու մասին: Այդ կապակցությամբ ՀՅԴ Բյուրոն առաջին հերթին հատուկ կոչով հայտարարեց կուսակցության շարքերի մոբիլիզացիա՝ «Ամեն ընկեր պարտական է իրեն դնել կուսակցութեան տրամադրութեան տակ և անմիջապես կատարել իրեն տրված հրահանգը»[4]: Ի լրումն դրա՝ սեպտեմբերի 29-ին ՀՅԴ Բյուրոն կուսակցական ընկերներին ու մարմիններին իջեցրեց յոթ կետից բաղկացած պահանջների կատարման հրահանգ՝ համախմբել կուսակցության ողջ ուժերը և դնել նրա պատասխանատու մարմինների տրամադրության տակ, մտնել բանակի շարքերը, կազմակերպել թիկունքի պաշտպանությունը, օգնել ամեն կերպ պետական օրգաններին՝ զինվորական, թե քաղաքացիական, տանել բացատրական աշխատանք, պայքարել դասալքության դեմ, խստիվ հետապնդել ներքին խռովարար տարրերին[5]: Իր հերթին, ՀՅԴ Երևանի քաղաքային կոմիտեն ազդարարում էր բոլոր զինապարտներին և զինապարտությունից ազատ համարվածներն՝ իրենց կուսակցական անդամատետրերով ներկայանալ քաղաքային կոմիտեի գրասենյակ[6]: ՀՅԴ Բյուրոյի և կառավարության այդ օրերի գլխավոր կարգախոսները դարձան «Հայրենիքը վտանգի մեջ է», «Բոլորը դէպի ֆրօնտ», «Ամեն ինչ ֆրօնտի համար, ամեն ճիգ յաղթելու համար» և այլն[7]: Սեպտեմբերի 30-ին Զինվորական նախարարության «Ռազմիկ» պաշտոնաթերթի խմբագրության՝ հայ զինվորին ուղղված կոչում ասվում էր՝ լինել քաջ ու

թուրքերի հարձակումը «սեպտեմբերի 28»-ի փոխարեն, ինչպես որ կա կառավարության հաղորդագրության բնագրում, Վրացյանի գրքում գիտակցաբար, թե տպագրական սխալի պատճառով, մի քանի անգամ նշված է «սեպտեմբերի 23», որը, անշուշտ, սխալ է: Մենք համեմատել ենք Վրացյանի մենագրության Բեյրութի ու Երևանի հրատարակությունները, սակայն ամսաթիվը նույնն է՝ «23»-ը (տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, 1958, էջ 468; Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 496): Հավանաբար, այս հանգամանքը հետագայում պատերազմի սկսման հարցում տարբեր հեղինակների մոտ տարընթերցումների տեղիք է տվել: Կարելի է ենթադրել, որ ամսաթվի այս անճշտությունն է եղել պատճառը, որ Ս. Վրացյանը թուրք-հայկական պատերազմի սկիզբը համարել է սեպտեմբերի 23-ը (տե՛ս նույն տեղում, համապատասխանաբար, էջ 466 և 493):

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 244, թ. 2; նաև՝ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 496; «Մարտական գործողությունները Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ (1920 թ. հունիս-նոյեմբեր)», Հայկական բանակի սպայի հուշերում, աշխատասիրությամբ Վ. Հարությունյանի, Ե., 2019, էջ 40:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 244, թ. 2:

[3] Նույն տեղում, թ. 1:

[4] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 180, թ. 2; նաև՝ Տէր-Հակոբեան Հ., Հայաստանի վերջին աղէտը, Կ. Պոլիս, 1921, էջ 35-36:

[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 180, թ. 3:

[6] Տե՛ս Տէր-Հակոբեան Հ., նշվ. աշխ., էջ 37:

[7] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 180, թ. 1-2; «Յառաջ», Երևան, 30 սեպտեմբերի, 1 և 2 հոկտեմբերի, 1920 թ.:

հաղթող, քանի որ թուրքական զորքերը տաճիկ փաշաների ղեկավարությամբ նպատակ են դրել «հարւաածելու Միացեալ եւ Անկախ Հայաստանի գաղափարին»[1]:

Սեպտեմբերի 29-ի ուշ երեկոյան Կարսի և Ալեքսանդրապոլի շրջանների զորքերի հրամանատար գեն. Մ. Սիլիկյանը ծածկագիր-հեռագրով, փաստորեն, առաջին անգամ զեկուցում է Երևան՝ բանակի հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանին՝ ճակատամերձ շրջաններում ծավալվող ռազմական իրադարձությունների վերաբերյալ[2]: Դրանից հետո Մ. Սիլիկյանը կամ իր շտաբի պետ գնդապետ Ա. Վեքիլովը Ալեքսանդրապոլից ռազմական վիճակի վերաբերյալ օրը 2-3 անգամ ամփոփագրի ձևով զեկուցել են Երևան՝ գլխավոր հրամանատարին կամ շտաբի պետին[3]:

Սեպտեմբերի 30-ին նախարարների խորհրդում ՀՀ զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի տված գաղտնի զեկուցման հիման վրա, ուր խոսվում էր այն մասին, որ «ներկա դեպքերը Հայաստանում արտակարգ բնույթ են կրում, և որ Հայաստանը ապրում է քաղաքական տեսակետից անհամեմատ ծանր օրեր, միջնորդում էր խորհրդի առաջ ռազմական դրության մեջ հայտարարել ամբողջ Հայաստանը և հիմնել զինվորա-դաշտային դատարաններ այն բոլոր վայրերում, որտեղ անհրաժեշտ կգտնի սպարապետը՝ համաձայն նախարարների խորհրդի ս. թ. օգոստոսի 9-ի օրենքի»[4]: Այդ հիման վրա անմիջապես Հ. Օհանջանյանը և Ռ. Տեր-Մինասյանը սեպտեմբերի 30-ին համապատասխան օրենք են հաստատում, որով՝ «Հայաստանի ամբողջ տարածքը հայտարարվում էր զինվորական դրության մեջ»[5]: Ռազմադաշտային դատարաններ հիմնելու համար հիմք է հանդիսացել կառավարության 1919 թ. հուլիսի 24-ի օրենքը[6]: Սեպտեմբերի 30-ին նախարարների խորհուրդը հայտարարում է 32-35 տարեկան զինապարտների նոր զորակոչ և այլն:

Իր հերթին, ներքին գործերի նախարար Սարգիս Արարատյանի հրամանով, «Համաձայն 1920 թ. օգոստոսի 13-ի օրենքի, Հայաստանում գտնվող բոլոր բժիշկները, դեղագործները, ֆելդշերները (բուժակ՝ Ա. Հ.) և գթության քույրերը մինչև 45 տարեկան հասակը ենթարկվում են մոբիլիզացիայի՝ ընդհատելով նրանց տրված տարկետումները, արձակուրդները ներկայանալ Ձեր գավառի և քաղաքի համապատասխան զինվորական պետին ու հավաքակայան»[7]:

Համաձայն նախարարների խորհրդի հոկտեմբերի 2-ի հաստատած օրենքի և ի լրումն ներքին գործերի նախարարության սեպտեմբերի 30-ի պարտադիր որոշման՝ նախարար Ս. Արարատյանը հայտարարում է դասալքության դեմ պայքարի հետևյալ միջոցառումները.

1. դասալիքները, համաձայն 1920 թ. հուլիսի 24-ի նախարարների խորհրդի հաստատած օրենքի, ենթարկվում են մահապատժի զինվորական դաշտային դատարանի միջոցով՝ նրանց ամբողջ շարժական և անշարժ գույքի բռնագրավման հօգուտ պետգանձարանի,

2. դասալիքներին թաքցնողները ենթարկվում են 1-6 ամիս բանտարկության՝ նրանց շարժական և անշարժ գույքի հօգուտ պետգանձարանի գրավման,

3. բոլոր պետական, հասարակական և մասնավոր հիմնարկությունները, ինչպես նաև մասնավոր անձանց, արգելվում է ծառայության ընդունել նրանց, որոնք զինծառայությունից ազատման վկայական չեն ներկայացնի և այլն[8]:

Դասալքության դեմ պայքարի միջոցառումների մասին սեպտեմբերի 30-ին կոչով ու հրամանով է հանդես եկել նաև զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը: «Հայրենիքի փորձության այս ծանր ժամին,– կարդում ենք հրամանում,– երբ Հայաստանի բոլոր հավատարիմ և հարազատ զավակների հուժկու բազկի հարվածների տակ պիտի փշրվեն թշնամու ուժերը, հայտարարում ենք ի լուր ամենի, որ զենքի տակ կոչվող տղամարդկանցից ով համարձակվի **խուսափել**

---

[1] *«Ռազմիկ», Երեւան, 30 սեպտեմբերի 1920 թ.; նաև՝ ՀԱԱ, ֆ. 280, ց. 2, գ. 37, թ. 1:*

[2] *ՀԱԱ, ֆ. 280, ց. 2, գ. 35, թ. 1:*

[3] *Տե՛ս նույն տեղում, թ. 1-131:*

[4] *Նույն տեղում, գ. 36, թ. 1:*

[5] *ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 243, թ. 1; ֆ. 280, ց. 2, գ. 36, թ. 1:*

[6] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 186, թ. 55:*

[7] *ՀԱԱ, ֆ. 280, ց. 2, գ. 36, թ. 2; «Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.)», կազմող Ս. Միրզոյան և ուրիշներ, Ե., 1998, էջ 424, «Յառաջ», Երեւան, 22 հոկտեմբերի, 1920 թ.:*

[8] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 244, թ. 3:*

շարքերը մտնելուց կամ **դասալիք** լինի (ընդգծումները բնագրինն է՝ Ա. Հ.), նա խստորեն կպատժվի ռազմական ժամանակի վերաբերյալ օրենքի համաձայն: Ով կլքի մեր սեղմ շարքերը կամ կդավաճանի հայրենիքին, այդպիսին մահվան պատժի կենթարկվի կախաղանի միջոցով, այն էլ հրապարակավ»[1]: Նույն օրը հայ զինվորներին ուղղված կոչով հանդես եկավ նաև նախարարության «Ռազմիկ» պաշտոնաթերթի խմբագրությունը[2]: Արձանագրենք նաև, որ հոկտեմբերի 2-ին հայրենիքը պաշտպանելու և թշնամուն հաղթելու հայ ժողովրդին ուղղված կոչով հանդես եկավ Հայ Ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) Հայաստանի կենտրոնական կոմիտեն (ԿԿ)[3]:

Հոկտեմբերի 1-ին Երևանում հիմնվեց Զորաճակատին օժանդակող կոմիտե, որն իսկույն կոչով դիմեց Հայաստանի քաղաքացիներին: Դրանում մասնավորապես ասված է. «Հայ քաղաքացինե՛ր, ոտքի կանգնեցէք, ամբողջ հայութիւնը զօ՛րք պիտի դառնայ: Օգնեցէ՛ք, մեր իշխանութիւններին, որ զօրահաւաքն աւելի յաջող ընթանայ: Դասալիքներին քշեցէ՛ք տներից, այգիներից եւ թագստոցներից: Ամաչացրէ՛ք, վախկոտներին: Գնացէ՛ք, զինավարժութեան: Մենք պիտի յաղթենք թշնամուն եւ անպատճառ կը յաղթենք» և այլն[4]:

Ինչպես նկատում ենք, Հայաստանի կառավարության թշնամուն դիմակայելու ու հակահարված տալու բոլոր կտրուկ միջոցառումներն ու գործողությունները սկսվել են սեպտեմբերի 28-ին և դրան հաջորդող օրերին, ինչը ինքնին հավաստում է, որ պատերազմը սկսվել է հենց այդ օրը:

Արտաքին հաղորդագրությունները ևս վկայում են, որ, իրոք, պատերազմի սկիզբը համարվել է սեպտեմբերի 28-ը: Այդ օրը Հայաստանի վարչապետ և արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանյանը հեռագրում է Վրաստանում Հայաստանի դիվ. ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին. «Թուրքական զորքերը մեծ ուժերով հարձակվել են մեր զորքերի վրա ...: Դրությունը շատ ծանր է»[5]: Սեպտեմբերի 30-ին վարչապետը հեռագրում է Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար Գ. Չիչերինին, որ սեպտեմբերի 28-ին թուրքական զորքերն ընդհանուր հարձակման են անցել Հայաստանի զորքերի դեմ Օլթիի, Բարդուսի (Բերդուս), Կարաուրգանի և Քարակուրտի շրջաններում[6]: ՀՀ արտաքին գործերի նախարարության տեղեկատու բաժնի վարիչ Մ. Արզումանյանը հոկտեմբերի 1-ի թիվ 14 տեղեկագրում հայտնում է, որ «Հայաստանի կառավարությունը սեպտեմբերի 30-ին մի հայտագիր ուղարկեց Չիչերինին և Լեգրանին», որով «խնդրվում էր կանգնեցնել Խորհրդային Ռուսաստանի դաշնակից տաճիկ զորքերին առաջխաղացումը և հետ քաշել նրանց Հայաստանի սահմաններից»[7]:

Որ թուրք-հայկական պատերազմը սկսվել է սեպտեմբերի 28-ին, վկայում է նաև Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի (ՌՍԴԽՀ) լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը: Սեպտեմբերի 29-ին նա հեռագրում է Գ. Չիչերինին, որ «Թուրքերը սկսել են հարձակում Կարսի ռազմաճակատում, գրավել են Սարիղամիշը»[8]: Ընդ որում, Լեգրանը դժգոհություն է հայտնում, որ «թուրքերը հարձակվեցին՝ մեզ տեղյակ չպահելով»[9]:

Այսպիսով, արխիվային ֆոնդերից և ՀՅԴ ու կառավարության հաղորդագրություններից, մամուլից, զանազան հուշագրություններից բերված փաստերը, վավերագիր նյութերը ցույց են տալիս, որ մինչև սեպտեմբերի 29-ը կուսակցական և պետական մարմինները, ներառյալ Հայաստանի մամուլը, այդ թվում ընդդիմադիր ՀԺԿ-ի «Ժողովուրդ», Հայ Ս. Ռամկավար կուսակցության (ՀՍՌԿ) «Հայաստանի ձայն» և այլ պարբերականներ լռում և առանձնապես ոչ մի ահազանգող

---

[1] *Նույն տեղում, ֆ. 280, ց. 2, գ. 48, թ. 1:*

[2] *Տե՛ս Տէր-Հակոբեան Հ., նշվ. աշխ., էջ 41-42:*

[3] *Տե՛ս «Ժողովուրդ», Երեւան, 3 հոկտեմբերի, 1920 թ.:*

[4] *ՀԱԱ, ֆ. 280, ց. 2, գ. 39, թ. 1; Արծրունի Վ., Հայ-տաճկակն պատերազմը, հայ սպայութիւնը, Շատախ, Ե., 2002, էջ 141:*

[5] *Զոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 182:*

[6] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1129, թ. 2:*

[7] *Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 112:*

[8] *«Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества» (документы и комментарий), составитель профессор Ю. Барсегов, т. 2, ч. 1, М., 2003, с. 178.*

[9] *Նույն տեղում, էջ 183.*

տեղեկատվություն կամ լուր չեն հաղորդում հայ-թուրքական սահմանի, առավել ևս պատերազմական զինաբախման մասին, որն ինքնին վկայում է, որ մինչև սեպտեմբերի 28-ը հայ-թուրքական սահմանին եղել է ոչ պատերազմական, հարաբերական խաղաղ վիճակ:

Եվ ինչպես վերը փաստվեց, ամեն ինչ սկսվել է սեպտեմբերի 28-ի գիշերը: Իսկ սկսած սեպտեմբերի 30-ից՝ տեսնում ենք, որ կառավարության շրջանակներում և լրատվամիջոցներում սկսվում են մեծ անհանգստություն, ահազանգ, տագնապալի հաղորդագրություններ թուրքերի հարձակման, ռազմական գործողությունների և հայկական տարածքների գրավումների մասին: Կարելի է դիտարկել, որ սեպտեմբերի 20-27-ի ընթացքում հայ-թուրքական սահմանին, անշուշտ, եղել են սահմանային ընդհարումներ, որոնք, կարծես, արդեն սովորական էին դարձել՝ սկսած հատկապես հունիս ամսվա կեսերից: Կարելի է նաև ենթադրել, որ, հավանաբար, ժողովրդի մեջ տագնապ չառաջացնելու համար դրանց վերաբերյալ տեղեկատվություն չի հրապարակվել: Իրավիճակը կտրուկ փոխվում է, երբ բացում ենք «Յառաջ»-ի, «Ժողովուրդ»-ի սեպտեմբերի 30-ի (հինգշաբթի) և դրան հաջորդող օրերի համարները: Այսպես՝ ՀԺԿ «Ժողովուրդ» պաշտոնաթերթը «Կարսի ճակատ» վերտառությամբ հաղորդագրության մեջ գրում է. «Սեպտեմբերի 28-ի գիշեր տաճիկները զգալի ուժերով յարձակման անցան Սարիղամիշի վրայ, միևնոյն ժամանակ՝ Բարդուսի և Կարակուրտի վրայով: Թշնամու ճնշման տակ մեր զօրամասերը յետ են նահանջում դէպ Սարիղամիշ: Տաճիկների կողմից գործում են երկու լրիւ դիվիզիաներ»[1]:

Պարբերական մամուլը՝ որպես օրվա կյանքի ու իրադարձությունների զարկերակ, բնականաբար, իսկույն արձագանքել է տեղի ունեցող անցուդարձին, դեպքերին ու իրադարձություններին: Պատերազմի սկսվելու մասին առավել օպերատիվ ու լայն արձագանքել է հանրապետության մամուլը՝ «Յառաջ», «Ժողովուրդ», «Հայաստանի ձայն», «Բանվորի ձայն», «Ռազմիկ» և այլն, որոնց ամենօրյա մեծագիր ահազանգն էր. «**Հայրենիքը վտանգի մեջ է**»:

Հավելենք նաև, որ պատերազմի սկսվելուն պես հայ հասարակական-քաղաքական բոլոր ուժերը (բացառությամբ բոլշևիկների) մեկ մարդու պես հանդես եկան կոչերով՝ հայրենիքը, պետականությունն ու անկախությունը պաշտպանելու, անարգ թշնամուն հակահարված տալու և երկիրն ազատագրելու վճռականությամբ: Կառավարության սեպտեմբերի 30-ի որոշումով, ժողովրդին համախմբելու և նրա եռանդը քաջալերելու առաքելությամբ ռազմական շրջաններ գործուղվեցին նախարարներ և խորհրդարանի պատգամավորներ: Մեծ լիազորություններով ճակատամերձ Կարս մեկնեցին գյուղատնտեսության և պետական գույքերի նախարար Ս. Վրացյանը, խնամատարության նախարար Ա. Բաբայանը, Ալեքսանդրապոլ՝ արտասահմանից նոր վերադարձած նախկին վարչապետ, պատգամավոր Հ. Քաջազնունին, հաղորդակցության նախարար Ա. Ջամալյանը, կրթության և արվեստի նախարար Գ. Ղազարյանը, Ղազախի ճակատ՝ ֆինանսների նախարար Ա. Գյուլխանդանյանը, Սուրմալու՝ ներքին գործերի նախարար՝ Ս. Արարատյանը, Նոր Բայազետ՝ Սյունյաց նախկին նահանգապետ Ս. Մելիք-Յոլչյանը, Էջմիածին ու Աշտարակ՝ պատգամավորներ Հ. Տեր-Հակոբյանը և Հ. Տերտերյանը, տարբեր ուղղություններով՝ Լ. Շանթը, Ս. Տիգրանյանը, Հ. Բուդաղյանը, Վ. Նավասարդյանը, Ա. Հովհաննիսյանը և ուրիշներ[2]:

Տագնապալի այդ օրերին բոլոր կուսակցությունները համախմբվեցին կառավարության շուրջը: Հոկտեմբերի 1-ին ներքին գործերի նախարար Ս. Արարատյանի մոտ հրավիրվեց խորհրդակցություն, որին մասնակցում էին հանրապետությունում արտոնված կուսակցությունների ղեկավարներ, ինչպես նաև լրատվական միջոցների ներկայացուցիչներ: Խորհրդակցության մասնակիցները միակամ պատրաստակամություն հայտնեցին վտանգի պահին սատար կանգնել հայրենիքին ու կառավարությանը[3]: Այդ նպատակով ստեղծվեց Միջկուսակցական խորհուրդ, որի նախագահ ընտրվեց պատգամավոր Արամ Սաֆրաստյանը: Միջկուսակցական խորհրդում

---

[1] *«Ժողովուրդ», Երեւան, 30 սեպտեմբերի, 1920 թ.:*

[2] *Տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Հ. Քաջազնունու ֆոնդ, գ. 150, թ. 1, գ. 164, թ. 2; Տէր- Հակոբեան Հ., նշվ. աշխ., էջ 46; Իրապէկ Յ. (Տէր-Հակոբեան Հ.), Մոտիկ անցեալից (պատմական դէպքեր և ապրումներ 1917-1922), Պէյրութ, 1956, էջ 71-72; Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Պէյրութ, 1958, էջ 477; «Ակատ, Անկախ և Միացյալ Հայաստանի վերջին օրերը», Ե., 1993, էջ 36:*

[3] *Տե՛ս Տէր- Հակոբեան Հ., նշվ. աշխ., էջ 53:*

ընդգրկվել էին՝ ՀՅԴ, ՀԺԿ, ՀՍՌԿ, Հայաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցության (ՀՍԴԲԿ), Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան և Սոցիալիստ-հեղափոխականների (էսէռների) կուսակցությունները: «Հայ ժողովուրդը,– գրում էր Կարո Սասունին,– երբեք մէկ մարդու պէս ոտքի չէ կանգնած, որքան այդ բանը յայտնաբերեց հայ-թրքական պատերազմի օրերուն»[1]:

Այսպիսով, բերված փաստերն ու փաստարկները վկայում ու հաստատում են պատմական այն ճշմարտությունը, որ թուրք-հայկական լայնամասշտաբ պատերազմը, որը, ցավոք, աղետալի հետևանքներ ունեցավ Հայաստանի ու հայ ժողովրդի համար, սկսվել է **սեպտեմբերի 28-ին**:

Арарат Акопян, К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ). В армянской и зарубежной историографии, в литературе прошлых лет и новой литературе по разным причинам и соображениям до сих пор имеются разногласия в вопросе о точной дате начала турецко-армянской войны, произошедшей ровно сто лет назад, в 1920 г. Большая часть историков и мемуаристов считает датой начала войны 23 сентября, другая часть – 28 сентября. Понятно, что основной причиной существующего по сей день подобного разногласия было то, что Турция начала войну против Армении без какого-либо объявления. Богатейшие фактические данные и материалы архивов, документов, мемуаров, печати бесспорно подтверждают ту историческую реальность, что датой начала этой войны, принесшей величайшее бедствие армянскому народу, было **28 сентября**, когда кемалистская Турция напала на Армению, и началась широкомасштабная война.

Ключевые слова: *турецко-армянская война 1920 г., Армения, С. Врацян, разногласия, историография, Карс, 28 сентября, фронт, решение, «Арадж», правительство.*

Ararat Hakobyan, ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR). In the Armenian and foreign historiography, in the past and new literature, for various reasons and considerations, there is still disagreement on the exact date of the start of the Turkish-Armenian war, which occurred exactly one hundred years ago, in 1920. Most historians and memoirists consider the date of the outbreak of war September 23, others - September 28. It is clear that the main reason for this disagreement till this day was that Turkey started the war against Armenia without any announcement. The richest factual data and materials of archives, documents, memoirs, and press indisputably confirm the historical reality that the beginning of this war, which brought the greatest disaster to the Armenian people, was September 28, when Kemalist Turkey attacked Armenia, and a large-scale war began .

Key words: *Turkish-Armenian war of 1920, Armenia, S. Vratsyan, disagreement, historiography, Kars, September 28, front, decision, “Haraj”, government.*

[1] *Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 53:*